



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17261

1879

37
U-17

2010

2001

149

ՀԱՅԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

32
Q-17

1-50

Printed in Turkey

37
4-17
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱԶՄԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

—
ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ԴԳՐՈՅՆԵՐ

—
ԳՐԵՑ
ՅԱԿՈՒՑ ԱԳԼԿՈՒԹՈՒՍԵԱՆՅ
ՄԵԼԻՏԻՆԵՑԻ



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՊԱՐՈՆԵԱՆ

—
1879

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ս. ՊԱՐՈՆԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆՈՑ

11 Գռնագրու Պատրիարքարան փողոց 11

0

8920



506
39

ԻԻՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԾՆՈՂԱՑ

ՔԱՂՅՐ ՅԻՂԱՏԱԿԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ՅԵՐԱԽՏԱԳԷՏ ՍՐՏԷ

ԱՇԽԱՏՈՂՆ

Սոյն ստորագրութիւնը չ'կրող օրինակը
անվաւեր է :

Handwritten signature

ՅԱՌԱՋԱԲԱՆ



Մենք հրատարակելով ներկայ շնչին երկերնիս ,
եթէ մասնաւորապէս քաջալերութիւն գտնելու բախ-
դին արժանանանք , անտարակոյս պիտի ջանանք նիւ-
թերնուս շարունակութիւնը 'ի լոյս հանել , որ ան-
շուշտ դեռ շատ ջուր կրնայ վերցնել :

Ամեն ոք գիտէ թէ՛ մի բան գրելը այլոց հետ
խօսել է , իսկ առածը կասէ « Մարդ իւր սրտի ցաւն
ուրիշին ասելով կ'թիթեւնայ » :

Մենք մեր սրտի ցաւերու մէկ մասը անաւասիկ
կ'դնենք հասարակաց դատաստանի առաջ . կ'ինայ
սպասել անհամբերութեամբ Պօլսոյ գտնուած Հայ էն-
տէլէգէնցիայի վճռին հասկանալու համար թէ՛ ո՞ր
աստիճան արդարացի են մեր դիտողութիւնները :
Այո՛ , անհամբերութեամբ սպասել , որովհետեւ եթէ՛
մենք սխալած էլ լինինք , ընտրուած ներկայ նիւթը
անտարակոյս բացատրուելու եւ մեկնուելու կարօտ
է , որովհետեւ նա մահու եւ կենաց խնդիր է :

Ի՞նչի ծածկենք մեր փափազը : Մենք կ'ըսդ-

ձանք մեր սրտի համայն ցաւերը հետզհետէ ՚ի հանդէս հանել, զի անոնք բոլորն հանրական են, անձնական չ'են: Եթէ հասնինք մեր նպատակին մենք ըզմեզ մի աստիճան երջանիկ կ'սեպենք, ըստ որում գոնէ այդ նկատմամբ վրանուս բեռն նետած կ'լինինք:

Մեզ դէմ եղած բոլոր արդարացի հերքումները մենք ուրախութեամբ կ'ընդունինք, հրապարակաւ շնորհակալութիւննիս կ'յայտնենք, զի մենք կ'բաղձանք խնդիրը պարզել, ուրիշ ոչինչ:

Մենք Պարոններ, ո՛չ հիներէն ենք եւ ո՛չ նորերէն, այլ ո՛ւր որ ճշմարտութիւն կայ անդ ենք:

ԱՇԽԱՏՈՂՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՍՆԱԽՈՐ ԴՊՐՈՅՆԵՐ

Ա.

Մեր ժամանակից 20 տարի առաջ Տփլիսի մէջ մի սրբազան խումբ մի երիտասարդներին իբր Հայ ազգութեան յոսն կացուցանելու գաղտնի մի ընկերութեան գլխաւորներին նոյն ատենուայ նահանգապետ Արշիլին մատնեց: Նորին Գերազնութիւնը թէև քաջ գիտէր Հայի այդպիսի մի մտաց տրամադիր չ'լինելը, սակայն մատնիչ հողեւորականի թախանձանքներից հարկադրեալ, անոնց մի քանիսին իւր մօտ հրաւիրելով՝ յայտնեց թէ « Պարոններ, ձեր այս ինչ մտաց վրայ լինելնիդ կառավարութեան յայտնուելով՝ պարտիք արտօրիլ »: « Տէ՛ր,

պատասխանեցին ներկայ լինողները , մենք սկիզբն այս ինչ ճեմարանի և յետոյ Տերբթի Համալսարանի ուսանողներիցը ենք , քսան տարի շարունակ գիտութեան շրջանի մէջ կեանք վարելով՝ չկրցանք գտնել պատմութեան մէջ մի ազգ , որ Հայի գտնուած պարագաներին ենթակայ լինելով ազատութեան ձգտած լինի . ուստի թող տուէք ասել թէ՛ կամ մենք խենդ պիտի եղած լինէինք մի այդպիսի խորհրդածութեան մէջ մտնելու և կամ ներեցէ՛ք ասել որ ձեզ ասողը յիմար է » :

Չ'է , պարոններ , ոչ խելարը դուք էք , որ գիտակցութիւն ունիք , և ոչ ինձ ասողը , որ չ'գիտար թէ ի՞նչ կանէ : Այլ ես միայն այս դէպքին մէջ ազէտ գտնուեցայ , որ ձեզ աստ հրաւիրեցի : Ռուսիոյ համար բաւ է հսկել ձեր հասարակութեան վրայ , որ ապագային մի այդպիսի ձգտման յարմարութիւնները չ'կարողանայ ձեռք բերել : Ասկէ աւել ոչինչ , դնացէք բաներնուդ , ասաց Գեներալը :

Արդ՝ 20 տարի առաջ Տփլիսի Հայ երկտասարդները այսպէս վարուեցին իւրեանց դէմ լարուած մի որոգայթի հետ : Սակայն դեռ երէկ չ'է միւս օրն էր որ Պօլսոյ Հայ Խմբագիրները քիչ մնաց մեզ համար կովկասեան երկներին մէջ մի ազատ Հայրենիք ստեղծէին : Սակայն մենք թողութիւն կը հայցենք ընթեր-

ցողներէն որ Մանգուսայի տղահութեամբ ծամած ծումանը ստիպուեցանք բերանիս առնել :

Ստոր հետ միասին չ'մոռնանք շնորհակալութիւննիս յայտնել հրապարակաւ Հայ մամուլի ընդհանուր ներկայացուցիչներուն , որոնք , երևի մեզ՝ խնայելով լուծ են Սստուածաբան , հոգեբան , տրամաբան , ճարտասան և բանաստեղծ եպիսկոպոսի մը քարոզին նկատմամբ թէ՛ « Խաչը ձեռիս ձեր հրամանատարը պիտի լինիմ » :

Եղան այնպիսի պարոններ , որոնք այդ դէպքը այլ և այլ կերպ մեկնելով անոր տակը յօգուտ Հայութեան բան մը նշմարեցին : Սակայն յայտնի է , որ լեզուն ոսկոր չ'ունի , նա՛՛ ամեն կողմը կ'ճոճի : Բայց ի՞նչ էլ որ լինէր , ըստ մեզ այդ նշանակէր խաւարումն Պօլսոյ լուսիններին :

Արևելեան պատերազմի վերջին միջոցին՝ Սեւաստափոլի առաջն ընկնող Գենէրալ Րիադը , որ առաջին երկու տարին կովկասեան բանակին մէջ մեծ տեղ բռնած ունէր : Ս. Էջմիածնայ Հայրապետին պաշտօնապէս տուած սի այցելութեան ժամանակ նորան իւր կարծեօք կրկնակի պակասութեան մէջ գտաւ — առաջին պատուանշանների փոխանակ ներսէսի կրծքին՝ պատին երեսն տարածեալ գորգի վրայ կախուած լինելը . երկրորդ պատերազմի նկատմամբ

եղած խոսակցութեան մէջ կաթողիկոսի պատաս-
խանելը թէ՛ « Աստուած արդարութեան կողմին
օգնէ » Պարոն Րիադը նոյն օրը երեւանէն իւր
թիկնապահներէն մէկն զրկած էր ասելու Հայ-
րապետին թէ՛ « Ինքն ստիպուած է այդ թերու-
թեանց մասին կայսեր տեղեկութիւն տալ » .
Իմաց տո՛ւր Պ. Գեներալին , ասեց Հայրապետը
պաղարունութեամբ մը , որ ես իրան նման ըս-
պայ չ'եմ , իմ պատուանշանները իմ Եկեղեցին
է . իսկ ի՞նչ կ'վերաբերի ուղղակի Ռուսաց զի-
նուց փառացն համար չ'աղօթելուս , թող գի-
տենայ , Պ. Րիադը , որ եթէ մի հոգևորակա-
նի աղօթքը նշանակութիւն ունի , նա՛ պիտի
լինի անտարակոյս յանուն արդարութեան . և
միթէ՛ նա՛ կ'կասկածի մեր տէրութեան արդա-
րութեան վրայ : »

Երբ հանդուցեալ Նալբանդեանցը դադա-
ղին մէջ կնքեալ յանձնուեցաւ Նոր-Նախիջևանց-
ւոց , նոյն տեղւոյն Առաջնորդ Եղիազար Սրբա-
զանը անիկայ չ'բացած զայն հողին չ'հանձնեց ,
իսկ երբ իրան հարցուեցաւ թէ ի՞նչ համար-
ձակութիւն կառավարութեան կնիքը լուծել :
Ես իմ պարտքս կատարեցի , Եկեղեցւոյս հրա-
մանին հնազանդեցի , զի մեր օրէնքը կ'հրա-
մայէ ննջեցելոց երեսն օրհնած հող չ'ածած չը
թաղել , պատասխանեց հոգևոր Հայրը :

Տասն և երկու տարի առաջ երևանայ մէջ

Հայ երիտասարդութիւնը միացած իւր հոգևոր
Առաջնորդի հետ՝ կամեցաւ մի ազգային օրիոր-
դաց դպրոց բանալ : Տեղւոյն կառավարութիւ-
նը ատոր առաջն առնելու համար իւր նոյն սե-
ռի դպրոցի ուսման վարձը խիստ թեթեւցնելն
յետոյ՝ յայտարարեց թէ՛ ձրի ևս աշակերտու-
հիներ պիտի ընդունի : Սակայն այս կողմնակի
հալածումը գործքը աւելի ևս յառաջացնելով
դպրոցն բացուեցաւ : Քաղաքին կառավարչա-
կան ուսումնական կաղմակերպութեան վերա-
տեսուչը Հայերէն պէտք եղած անձին հրաւի-
րեց պաշտօնապէս բացատրութիւն տալու : Իսկ
զնացող Պարոնը ասած էր թէ՛ « Մեր կայսեր իւր
ամեն կարգի հպատակաց լուսաւորելու փափա-
զըն առաջացնելու հետևապէս կառավարու-
թեան բեռն փոքր ինչ թեթեւցնելու դիտմամբ
բացած են այդ դպրոցը » : Այս պատասխանէն
յետ՝ թէև այդ ձեռնարկութիւնը այլ և այլ
խօսակցութեանց և գրութեանց նիւթ եղաւ ,
բայց և այնպէս գործքն առաջ շարժեց և
պէտք էր շարժել , ըստ որում երիտասարդու-
թիւնը հասարակութիւնը իրան աջակից ունէր :

Արդ՝ Պարոններ , մենք այս մի քանի փոք-
րիկ դէպքերը յիշելով՝ նախապէս փափագած
ենք իբր Հակահան կենաց վերաբերեալ իրա-
կանութիւններ՝ ընթերցողաց մի քննին տեղե-
կութիւն տալ մեզնից հեռի ապրող մեր արե-

նակլիած գտնուած հանդամանքներին վերաբերմամբ : Եւ երկրորդ ցանկացած ենք ասել թէ՛ մեր դիրքը ո՞ր աստիճան ծանրակշիռ է , որչափ փափուկ և շահի խնդիրներով զարդարեալ մի դարի մէջ կապրինք , որ զմեզ կ'ստիպէ անշուշտ մեր համայն խրդման մէջ լուրջ , խոհեմ , նիրհուն և օրինաւորութեան սահմանէն դուրս չելած շարժիլ :

Ո՞վ կրնայ պնդել թէ Հայկական դիրքն ունեցած մի ազգի Հայրապետը , Գննէրալի մը հետ Ներսէսէն աւելի խոհեմ կերպով կրնար վարուիլ . Ներսէսէն աւելի արժանաւոր կերպով կ'պատասխանէր : Ս. յո՛ւ , Ներսէսէն , զոր մեր տկար գրիչը թէ և կ'զգայ , բայց անկարող է ըստ արժանւոյն նկարագրել :

Աւելորդ թող չ'սեպուի աստ առաջ բերել բանաստեղծի կարճ ու ազդու խօսքը այդ մեծ մարդու համար թէ « Զարթի՛ր ի քնոյ ո՛վ Հայաստան , տես ո՞ւր է քո Ներսէսը . Ժամանակը պառաւել է , էլ չ'ծնիր այնպէսը » :

Ո՞վ կրնայ հաստատել թէ՛ մեր վիճակին ենթակայ մի հասարակութեան դժուարութեանց և որողայթի մէջ անկեալ երիտասարդները Տըփլիսի և Երևանայ Հայ պարոններէն աւելի իմաստուն կերպով կրնային շարժել և աւելի լաւագոյն միջոց մը կրնային գործք դնել : Իսկ ի՞նչ կը վերաբերի Եղիազար Սրբազանի վար-

մանց . մենք կ'բաղձայինք ՚ի սրտէ , որ ամեն Հայ հոգևորական իւր պարտքը այդ կերպ ճանաչէր , այդ կերպ խորհէր և այդ կերպ զգար ու գործէր :

Անցեալները պարոնին մէկին հետ Արարատեան ընկերութեան վերջին հաշուատետրին վրայ խօսելիս կ'պնդէր , որ Օսմանեան Հայք շատ կէտերի մէջ բարձր են Ռուսահայոցմէ և իր ասածին ապացոյց կ'բերէր թէ՛ նորա նիւթապէս մեզնից առաւելապահով վիճակաւը (1)

(1) Օսմանեան Հայք առ հասարակ այնպէս կ'կարծեն թէ՛ իրանց ազգայինը Ռուսիոյ տիրապետութեան ներքոյ շատ հարուստ են : Իսկ ըստ մեզ եթէ երբեմն այդպէս էր , այժմ չ'է . նոյն իսկ անոնք ինքեանք այս կէտը քաջ ըմբռնելով համոզուած են թէ՛ այն հարստութիւնը Շամիրի շնորհօք վաստկած էին , զի կովկասեան լեռները երկար ատեն պատերազմների կէտործն լինելով Պետութիւնը մի կողմից կ'հարկադրուէր ամեն տարի մեծամեծ գումարներ կովկաս դրկել . միւս կողմէն ուշադրութեան արժանի կէտեր ՚ի նկատի ունենալով՝ բնիկներին այլ և և այլ հարկերով և ուրիշ միջոցներով չ'էր ծանրաբեռէր : Իսկ արդ այդ երկիւղն չ'կայ . նա կ'խորհի և կ'կարծէ թէ՛ հարստութիւնը լուսաւորութիւնը կ'ծնի , իսկ լուսաւորութիւնը աղատութիւն : Ուստի օրդօդարսական կապով չ'միացած հասարակութեան , հարստութեան աղբիւրները կտրել պէտք է , որպէս զի նօրս հարկադրին խոնարհիլ ամեն պահանջի առաջ . Այսպէս ուրեմն թող այժմ վաստկին մեր այն տեղի ազգայինք անցեալ հարստութիւնները և մենք մեր խօսքերը յետ առնելով կեցցէ կ'գոչենք :

զոհողութիւննին այդ դրքին մէջ փոքր է :

Պարոն, շատ պարզ կ'իտրհիք կասեր այդ միջոցին մի ուրիշը : Հարկ է ի նկատի ունենալ թէ՛ նոքա իրանց կառավարելէն յետ՝ տուած են այդ ստակը . հետաքրքիր է իմանալ թէ՛ մենք ի՞նչ տուինք նոցա : Իսկ մեր կողմէն այդ հարջի մասին բաւական կ'համարինք ասել թէ՛ ամեն տեղ տիրեալ տարրները և մանաւանդ Հայերը մէկ աստիճան դպրոցական աշակերտի կ'նմանին , որոնց մէջ իւրեանց տիրողների ամեն մի յատկութիւնքը քիչ շատ կարտախայլի : Ուրեմն խնդիրը պարզեւրու համար հերիք է երկու պետութեանց մէջ իմաստասիրաբար մի համեմատութիւնք , մի բաղդատութիւն անաջ բերել և այլ ոչինչ :

Արդ՝ Պարոններ , թողենք այժմայդ համեմատութիւնքը , թողենք այդ հասարակութիւնները և նկատենք թէ՛ ի՞նչ է արդեօք այսօր Պօլսոյ ուսումնական համարուած 3 1/2 Հայերիս վիճակը : Մի միջոց առաջ Բիւզանդիոնի Հայ գիտնականները կ'գոռային . կ'գոչէին թէ՛ անհրաժեշտ է Հայկական նուիրապետական դասը իւր ստոր կացութենէն բարձրացնել : Եւ այսօր իսկ այդ կերպ որոտումներ պակաս չ'են : Սակայն ցաւալի կէտն այն է թէ՛ մենք ինքներս էլ միևնոյն տեղն ենք , միևնոյն իմաստակութեան տախտակի վրայ դրած ենք ոտքերնիս : Եթէ ասոնց

կ'պախարակենք , ո՛ւր է մեր դործնէութիւնը . եթէ նորանցից ներսէսներ , Սահակներ , Յովսէփներ և այլն կ'պահանջենք : Ո՛ւր են մեր վարդանները , Վահանները :

Մերոնք երբեմն Պարսկական սարսափելի հալածանքներից, զրկանքներից և հարստահարութիւններից ջլատուած՝ և Ասիոյ անիշխանութեանց այլ և այլ բռնաւորներից ու բռնութիւններից չարդ ու փշոր եղած կովկասեան լեռներէն իջնող քրիստոնեայ տէրութիւն մը իբր փրկիչ կ'սպասէին : Այլք մեր ապահովութեան համար ուրիշ սկզբունքներով ուրիշ յոյսեր իրանց սրտերի մէջ կ'տածէին : Սակայն այսօր իւր խելսպատակին մէջ փոքր ինչ նոր խելք ունեցող ամեն անձը՝ դիտէ թէ՛ ատոնք ամենքը չոր ու սին յոյսեր էին և են :

506

Ռուսիան կէս դարէն աւելի է Հայի և Հայաստանի մի ստուար մասն իւր մէջն առնելով իր քաղաքականութեան ամեն կողմը անոնց առաջն բաց արաւ : Այսօր դիտենք թէ՛ մեզ այնտեղ ի՞նչ վտանգներ կսպառնայ : Ուրիշ կողմէն երկու ուրիշ պետութիւնք իւրեանց քաղաքական նպատակներին համար , որոնց գոզցէս միայն շրթունքները Գրիստոնէից բարիք առնելու վրայ կ'ճառէ , թշուառ Հային մինակ ափփանքը մնացած՝ կրօնական միութիւնը ծուէն ծուէն արեցին : Օսմանեան հովանաւուն տակ ,



խլամութեան լուսնին ներքոյ Հայը չ'կըցաւ իւր բարոյական միութիւնը պահելով իւր նախնի Աստուածը խաղաղութեամբ պաշտել : Հետաքրքիր է իմանալ թէ՛ ի՞նչ կ'լինէր արդեօք մեր կացութիւնը եթէ ուղղակի ատոնց իրաւասութեան ենթարկեալ լինէինք :

Մենք կ'կարծենք թէ՛ մինչ օրս կովկասեան ազգերը եթէ լեհաստանի վիճակին ենթարկեալ չեն . այդ Օսմանցու շնորհքն է , ըստ որում այն երկիրն սահմանադրուի է , այն տեղ փափագուած կէտերը ի կատար ածելու ձեռնարկելիս՝ ապագան խորհելու խոր խորհուրդներ կան անշուշտ :

Սրդ՝ եթէ մեզ գործել և յառաջագիմել պէտք է , անտարակոյս և երկու անգամ երկու չորս լինելու նման ճշմարտագէտ մեր վրայ միայն և եթ յոյսերնիս դրած հարկ ենք շարժել Պիտոյ էքաջ ըմբռնել թէ՛ այլոց շնորհօք ապրելը ստրկութիւն է . ուրիշի հացով կեանք վարելը գերութիւն է : Մենք կ'կարծենք թէ՛ Ռուսահայք այս կէտերը մեզնից աւելի աղէկ կ'ըմբռնեն ու կզգան , զի նոքա փորձեցին իրանց գործնէութեան մէջ , տեսան անձամբ իրանց սեղմեալ վիճակը : Բայց և այնպէս հալածումը տարածում է : Ռուսիոյ քաղաքականութիւնը , որ թէ և իւր կեդրոնական գրութեամբ և բոլոր հասարակութեանց ի մի ձուլելու ընթացքով՝

իր երկրին մէջ Ռուսէն զատ՝ ուրիշ տարր չ'ճանաչէր կամ չ'սիրէր ճանաչել : Սակայն և այնպէս այն տեղ Հայոց աղղայնութեան զգացումը գոնէ մինչ այս օրուայ համար խօսելով եթէ այս տեղէն մի քանի աստիճան բարձր չ'է , պակաս բնաւ չ'է :

Հիւսիսային Պետութեան այն միտումը թէ շաղաղել համայն մանր մուկ տարրները 'ի Ռուսականութիւն օրթոտոքսական միութեամբ , կ'թուի թէ ուշ թէ՛ շուտ պիտի չ'հասնի իւր նպատակին : Մեզ քաղցր է կարծել թէ որչափ Ռուսիաց պիտի ջանայ ջնջել և անհետ առնել փոքրիկ հասարակութիւնները , նոյնչափ նոքա կենդանութիւն և զօրութիւն պիտի ստանան : Եւ գուցէ պիտի գայ մի օր , որ այդ պետութիւնը չափեց դուրս լեցուած պարկի մը նման պատուի : Սակայն մինչ այդ անուր հասնելը՝ խօսք չուզէր դեռ բաղմամբիւ զոհեր և պատարագներ պիտի մատուցուին : 1872 թուականին այդ սկզբան նահատակ գացող Ռուս սուլթանինը՝ Մոսկովայի նահանգական դատաստանի ատենին առաջ իւր ց'կեանս 'ի Սիպերիայ աքսորուելու դատապարտութեան վայրկեանին հետեւեալ ուշադրութեան արժանի երգը խօսեց թէ՛ « Զոհեր կ'ըլլին , Պարոններ , զոհեր , ախ ոչխարներ չ'են անոնք , ոչ երինջ ու հորթեր , այլ մարդիկ են նոքա ապագային համար զոհեր » :

Արդ՝ Պարոնայք, անհերքելի է թէ՛ մեր վիճակն դառն է. մեր ամեն մի քայլափոխին խոչնդոտները անպակաս են: Ամեն վայրկեան դրեթէ նորանոր դէպքեր մեզ կ'ապասեն: Սակայն ասոնց հետ միասին յոյսեր ևս պակաս չ'են, յոյսեր, որոնք թշուառ մարդուն ուրեմն և թշուառ աղգին զօրեղ նեցուկներն են: Ուստի նոյն իսկ այս պատճառաւ մեզ և մեզ նմաններին ամենէն առաւել գործել հարկ է: Եթէ երկրագործը սերմը հողին չ'տար անձրև պիտի չ'գայ ասելով՝ անտարակոյս մարդիկ սովամահ կ'լինէին: Նա՛ պարտաւոր է անշուշտ ցանել պէտք եղած զգուշութիւնները ևս ՚ի հարկ է առնելով՝ իսկ անձրև գալու և չ'գալու խնդիրը անշուշտ պարագաններին պիտոյ է յանձնել:

Այսպէս է անպատճառ մեր կենաց խնդիրն էլ: Սակայն ի՞նչ արինք մինչ ց'արդ և ո՞ր ենք:

Ահաւասիկ գլխաւոր հարցը:

Ամեն հասկացող ոք արդ՝ կրցածին չափ կը դուռայ կ'գոչէ, կասէ և կ'հրատարակէ թէ՛ դըպըրոցները մեզ համար մահու և կենաց խնդիր են: Ուստի մենք ևս այդպէս համոզուած լինելով հիմակու հիմայ մասնաւոր դպրոցների վերայ պիտի խօսինք, որոնք ինչպէս գիտեն ընթերցողք այժմ՝ Պոլսոյ մէջ բաւական թու կ'խաղան:

Բ.

Հարկ է անշուշտ չ'մոռանալ թէ՛ հեղինակութիւն և հետևողութիւն այլ և այլ բաներ են: Ուրիշ է մի միտք, մի իտէայ, մի գիւտ ստեղծել և հնարել կամ աւելի լաւ է ասել յայտ ածել: Ուրիշ է այդ արտայայտեալ նիւթը ուսումնասիրելով դայն այլ և այլ կերպ բացատրել և մեկնել:

Մենք Հայերս քաղաքակրթական (տիբլոմասիայի) նկատմամբ, խօսք չ'ուղէր, որ ժողովրդենք: Հետազօտեցէք պատմութեան թերթերը, քննեցէք նորան ամեն մի ֆաբթերը պիտի տեսնէք անշուշտ թէ՛ փոքր բացառութեամբ ազգերն են, որ միշտ հանճարները և հեղինակները արտադրած են: Այս կէտը մեզ կ'թնօնի թէ՛ շատ պարզ է. ի՞նչ մեծ գլուխներ կրնայ ծնիր մի ժողովուրդ, որմէ կ'պակսին այն բազմաթիւ միջոցները, որոնք ուղեղները քաջալերելու զօրեղ նեցուկներ են: Եւ միթէ՞ կարելի է ժխտել թէ՛ մարդուս կեանքը նիւթապէս ապահովացնող և հասարակութեան մօտ վարկ առաջ բերող պաշտօնները՝ բազմիցս սովորական մարդոց մեծամեծ անձանց ցանկին մէջ մտցրած

են : Ո՞վ չ'գիտեր թէ Ֆենելոն մի պարզ հոգեւորական էր , դէպք մը , որ զայն թագաւորական պալատն առաջնորդեց , առիթ եղաւ անշուշտ՝ նորան Տելեմաքի նման մի անմահ գրքի հեղինակ լինելուն : Տուէք դա՝ ձեր չ'հաւնած իմաստակ Հայ երիտասարդին մի բարձր տեղ մի բարձր դիրք ժամանակէ մը յետ մենք վըստահ ենք թէ՛ դուք զայն մի ուրիշ անձը կ'գտնէք :

Արդ՝ մի անձին Պիամարք ու Կարիպալտի⁹ անողը՝ նոյն իսկ իրանց շրջապատող հանգամանքները են . թող Գերմանացիք պատրաստ չը լինէին առաջին նախարարի գաղափարները ու ձգտումները ընդունելու , յայնժամ՝ նա՝ Ալեմա նիոյ միւս ուսումնականներէն մի մտտ էլ առաջ չ'էր կրնար անցնիլ : Թող իտալացիք չ'համակրէին Կարիպալտուն նա ոչ մի ժամանակ հասարակ զինուորէ մը բարձր դիրք չ'էր կրնար ունենար : Եթէ կ'բաղձա՞ք հարիւրներով Կարիպալտիներ յղեցէք յՍյրբատ . ի՞նչ կրնան արդեօք նորա անել այնտեղ . երբ իրանց շրջապատող ամփոխը՝ Չարին դէմ խօսելն անգամ Պօղոսի քարոզին հակառակ կ'գտնի :

Այսպէս մեր այս մի քանի խօսքերով սա՛ ուզեցինք ասել թէ՛ մենք Հայերս գոնէ այժմեան համար խօսելով հանճարներ չ'ունինք : Մենք ուսումնական համարուած երիտասարդներս ուրիշ բան չ'ենք . եթէ ոչ հետևողներ :

Եւ ցաւալի է խոստովանել թէ՛ մեծ մասերնիս կ'նմանիք այն հնակարկատ կոչկակարին , որոյ մօտ ամեն տեսակ կաշուոց կտորներ կան , բայց ամբողջ բնաւ :

Արդ՝ ասոր հետ միասին մեր բոլոր թերու թեանց դեղն ու դարմանը բազմիցս ասուած , գրուած և հրատարակուած է թէ ազգային դաստիարակութիւնը և գիտութիւնն է , որոնց հետ անբաժանելի կերպով կապուած ու կաշկանդուած պիտի ըլլան անշուշտ նիւթական կենաց ապահովութեան միջոցների զարգացնելը և բարոյականի օրինաւոր խարիսխանների վրայ հիմնելը :

Կ'հաւատա՞ք այժմ՝ մեզ Հայկական թըշուառութիւնը առաւել և առաւել զգալի է . քան մի քանի տարի առաջ կովկասեան երկիրներին մէջ երեբեալ ու տատանեալ շրջելիս : Եւ մենք արդ՝ կանխի՞ծէնք այն պարագաները , որք զմեզ Տաճկաստան նետեցին : Այնտեղ շատ անգամ այլ և այլ դէպքեր զմեզ տխրութեան Ովկիանոսների մէջ կ'ձգէր : Բայց մխիթաբու թիւն մը ունէինք : Եւ ի՞նչ էր այդ :

Օսմանեան Հայոց սահմանադրական զանազան ժողովների փառաւոր անունները , որոնք 'ի մեծ թշուառութիւն մեզ , ուրիշ բան չ'են եղեր , եթէ ոչ մէջը պարապ ընկոյզներ :

'ի զուր և ի նանիւր մինչ ցարդ Ռուսիոյ Հայոց

Թշուառ երիտասարդներէն շատերը այդ անուշ երազներով կ'ընջեն :

Արդ՝ ծախէր Պարոններ , հիմակու հիմայ թղթին այս կտորը և դառնանք մեր նիւթին : Թող ազգային գործոց կառավարող անձինք ձեռքերնին խղճմտանքնուն վրայ դրած պատասխանատու լինին Աստուծոյ , պատմութեան և ապագայ սերունդին : Սակայն ի՞նչ խենդ ու մենդ խօսքեր , ինչ պատասխանատուութիւն : Իմաստասէրն ասել է « Ազգ գայ և ազգ երթայ . բայց աշխարհ յաւիտեան կայ » : Հանգուցեալ Նալբանդեանցը համարձակել է յեղաշրջել այս պարբերութիւնը թէ՛ « Մարդ գայ և մարդ երթայ , բայց աշխարհ յաւիտեան կայ » : Մենք ասկէ աւելի յանդգնութիւն մը պիտի անենք : Սողոմոն կ'գոչէ « Լաւ է անուն բարի քան զոսկի և զարծաթ » : Իսկ Ռուսի մի առած կասէ « Պատիւը ոսկիէն սուղ է » մենք պիտի պնդենք թէ՛ լաւ է հարստութիւն եղուի թաւկան խարդախութեամբ քան աղքատութիւն օրինաւորութեան : Կերելի թէ այժմ այսպէս է :

Մենք Ռուսիոյ Հայոց մի քանի դպրոցներին մէջ բաւական տարիներ դաստիարակութեան պաշտօն վարած ենք : Եւ զիտա՞ք , անոնց մէջ համբաւ ստացող դաստիարակների կարգումը անկեղծ կասենք , ստոր տեղ մը ունէինք : Պօլիս ևս երկու երեք դպրոցի մէջ մի քանի ամիս

այդ՝ սուրբ գործքով զբաղեցինք . թէ որչափ համակրութիւն և յարգանք վայելած եմք այդ տաճարների ամբողջ կազմակերպութենէն , հաւատացէ՛ք ՚ի բան բերել չ'եմ կարող : Ուզողը կրնայ անձամբ տեղեկանալ : Սակայն դիտա՞ք , կեղնում յանուն Հայութեան , որ այդ մեր նուաստութեան արժանաւորութիւնը չ'էր , այլ արժանաւորների պակասութիւնը :

Ի՞նչ դպրոց , Պարոններ , և ի՞նչ դաստիարակներ , գոնէ մեր դիտցածների համար խօսելով : Ռուսիոյ մէջ դասատնումը սխալմամբ ծրիտող մի անձը սարսափելի պատասխանատուութեան կենթարկի . իսկ աստ ամեն դպրոց մի տեսակ սրճարան է :

Ռուս Պիպագոգներէն մէկը կասէ թէ « Կը բաղձա՞ք մի դպրոցի վիճակին վրայ տեղեկութիւն ունենալ , հարկ չէ ներս մտնել , դուրսէն ականջ դրէք , եթէ յաճախ լրութիւն կը տիրէ իմացէք որ աղի մի ձեւ է , հասարակութեան աչքերը շլացնելու . այն տեղ մտքերը կ'փտալին և կեանքը կը մեռնի , եթէ յաճախ աղմուկներ կը լսէք , հասկացէք , որ անի արեւելքի մի հոգեւորականի դասատունէն տարբերութիւն չունի . իսկ երբ այս երկու կէտի միջին ճանապարհով մանկան մը կարդալու ձայնը լսելիս , Չեղ այնպէս կը թո՞ւի թէ երկու անձինք մի խօսակցութիւն կանեն , վստահ եղէք թէ ամեն բան կատարեալ է » :

Արդ՝ չենք գիտար ով կը համարձակի ելնել ապացուցանելու թէ իմ կամ մեր դպրոցն այդպէս է :

Շատունց ի վեր ասուած է , և կըսուի թէ՛ Պօլիս մի ազատ քաղաք է : Առ ժամանակ այդպէս հաւատալով՝ ամօթ չ'է հա՛, մենք էլ թոյլատուութիւն կ'տանք մեզ՝ մեր զգացմունքը արձակ համարձակ ասելու , որն որ մեր համար զուտ ճշմարտութիւն է , թէև կը փափաքէինք սխալած լինելնիս :

Մենք՝ Պօլիսը գոնէ , Հայերիս մասին խօսելով մի քայտս կը նկատենք : Այս տեղ ամեն բան ձև , ամեն բան ցոյց և ամե բանն միայն դուրսէն փոյլուն : Եկեղեցին՝ մեր բոլոր աշխարհային փառաց և մեծութեանց փոխարէն մնացած եկեղեցին , իր սրբութիւնը , իր նուիրականութիւնը , և իր ազդեցութիւնը կորցրած , Հայկական ընտանեկան կենաց հիմքն ու խորիսին համարուած ամուսնութեան սուրբ խորհուրդը հիմն ՚ի վեր խախտած , Հայ անհատից առ միմեանս եղած յարաբերութիւնքը մի տեսակ արևելեան և արամտեան խառնուրդ կեղծ ու նենգաւոր վարմանց փոխուած կըրթութեան և դիտութեան կամ ուրիշ խօսքով , մահու և կենաց Սրբազան տները անկեալ լքեալ , և աւերեալ հետևապէս մի քանի շահասէրների մի նոր ոջախի ձեռին խաղալիկ դարձած . ազ-

դաց և ազանց մոլութեններէն այսպէս ասել մէկ մէկ հատ Հայ մարդուն ճակտին դրօշմած , անոնց այրիչ , կիզիչ և լավող զօրութիւնները մեր ընտանեկան խորերը մուտ գտած , մի խօսքով՝ ամեն բան անճոռնի , ամեն բան տգեղ , ամեն բան գարշելի և ամեն բան զղուելի :

Ջարմանալու չ'է պարոններ մեր խօսքերուն վրայ , զի Պօլսին մէջ համայն իրք Հոլուէի դեղահատին նման կ'վաճառուի :

Պարզ մարդիկ ե՞րբ արդեօք ձեր արտաքին տխմար խարդախութեանց հետ , ձեր տըգէտ աղանոյ հեղութեանց հետ մի քոքը էլ օձի իմաստուն խորագիտութիւնը պիտի ունենար :

Օսմանեան պարբերական թերթերն ԱՅ տարիէն աւելի է որ դեռ կը շարունակեն հրատարակել թէ՛ Հոլուէի ոսկեղօծ դեղահատերը գրեթէ ամեն տեսակ հիւանդութեանց կը բուժեն եղեր : Իսկ տեսքօթ Ռուսիան զայն քննեց , զննեց , լուծեց , վերլուծեց և վերջապէս մինչ ցարդ իր երկիրը չ'մտցրեց :

Արդ՝ ամենայն ոք լսած է և գիտէ թէ Եւրոպացիք անարգանաց դէմ մենամարտութիւններ կանեն : Եւ օրինաւոր մարդիկ շատ անգամ կզմայլին անոնց պատուասիրութեան վրայ : Բայց դուք պարոնայք , թողէք անոնց՝ մտէք դա մեր խըմպըլ յորջորձած՝ ասիոյ Հայ թուրք և

Ասորի Հասարակութեանց մէջ, քննեցէք, հետազոտեցէք դա՛ մեր բարբարոս անուանած Գիւրտ Չէրքէզ և Աճար ժողովրդի կենաց պարագաները, պիտի տեսնաք անշուշտ թէ՛ նոցա մէջ եղած մարդասպանութեանց մեծ մասը տեսակ մը տգէտ մենամարտութիւններ են պատուասիրութենէ ծագած : Իսկ Պօլսոյ մէջ մեր համոզումն է թէ՛ դողցէս ուրիշ բաների հետ պատուասիրութիւն ասուած կէտն էլ մեռել և նեխել է :

Չ'էք հաւատար պարոններ՝, մեր խօսքերին շրջեցէք Պօլսոյ թաղերը, ամեն տեղ թուք, մուր, նախատինք, անէծք, հայհոյանք և այլ չ'ենք գիտեր ինչե՞ր կ'տեղան պարոն Փափաղեանցի (1) և անոր ընկերներին վրայ : Իսկ յետո՞յ, յետոյ ոչինչ : Մէկ կողմէն պարոն Փափաղեանը իւր առևտուրը կը շարունակէ, անտարբեր և փառաւոր կերպով պատուասիրութիւն, յարգանք, վարկ, աղնուութիւն և այլ

(1) Հարկ կը համարինք յիշել թէ՛ այդ պարոնի եւ իւր ընկերների համար ասածուածները սուտ եւ զրպարտութիւն անգամ լինին, այնու ամենայնիւ օրինաւոր անձը ի նկատի ունենալով թէ՛ ձայն բաղմաց ձայն Աստուծոյ է, իւր պատիւը ու յարգանքը եթէ ունի, տեղը բերելու եւ հասարակաց խիղճն անգորբացնելու համար ասպարէզէն կը քաշուի : Չը լինի թէ՛ ատոնք՝ ազգին հետ պայմանագրութիւն մը ունին մինչև ցմահ պաշտօն վարելու :

ամեն սրբութիւն իւր մէջ կատարեալ կերպով մեռուցած կարծելով՝ դուցէ թէ՛ առանց իրան Հայ ազգը իր գոյութիւնն անգամ կ'կորցնէ : Միւս կողմէն հասարակութիւնը միայն խօսել գիտէ և այլ ոչինչ :

Հապա երբ կ'տեսնաք Պ. Փափաղեանցին և Պօլսոյ տեսակ մը իմաստակներին միասին . իսկոյն կ'յիշէք Կրեյովի փղի և փոքրիկ կենդանու առածը :

Կորէ՛ք խայտառակ մարդիկ, կորէ՛ք, չ'էք լսե՞ր, որ Աստուած կ'փչըէ մարդահաճոյների ոսկորը : Բայց մեղայ, մոռցանք որ Նիկիլիստ լինելը Պօլիս ևս մօտայ է :

Արդ՝ փոքրիկ բացառութեամբ ամեն տեղ ցուրտ, ամեն տեղ մեռելութիւն, ամեն տեղ անգործնէութիւն, ամեն տեղ դադարումն և գրեթէ ամեն տեղ միայն ձևական շարժումներ :

Հապա՛, հապա՛ մեր պարզևաբաշխութիւնները, մեր բաղմաթիւ ճառերը, մեր երգերը, մեր հանդէսները, բոլորը ոչի՞նչ ուրեմն կ'բացականջէ իմաստակին մէկը : Իսկ մենք կասենք թէ՛ ատոնք բոլորն էլ միայն ձևեր և ցոյցեր են, որոնց վերայ թղթին երկու երեսովը ուրիշ անգամ առիթ պիտի ունենանք խօսել, և շատ անգամ մեզ նման թթուն դրած երիտասարդները աղը դրած օրիորդներին հետ տեսնուելու կ'հաւաքուինք :

Արդ՝ պարոնայք, վատահութիւն չունիք մեր ասածներին, չէք հաւատարմեր խօսքերին կ'իսնդրենք քննեցէք լուրջ կերպով, դիտեցէք ուշադրութեամբ երեսփոխանական ժողովէն և անոր Սրբազան Նախագահէն սկսած, մինչև մեր թաղական պարոնները, հոգաբարձուները և վարժապետները, որոնք մեր ազգայնութեան գործող մարմինները են: Գիտօք, Պէրպէրեան մը, Գուրգենեան մը, Սուրէնեան մը, Մեղպուրեան մը և այլ չենք յիշեր ինչեան մը ատոնց ամենքի մուխը մարելին: Եթէ մտածէք խոր և անկողմնակալ ոգով՝ պիտի նկատէք անշուշտ թէ՛ այդ մի քանի անձինքը ազգայնութեան գործող ամբողջ մարմնոյն դէմ անուղղակի յանդիմանութիւնք և անպատուութիւնք են:

Անդգայ մարդիկ:

Այս կէտերէն յետ՝ դեռ կարծօղներ կա՞ն արդեօք թէ մեր ժողովները անձնասիրութիւն ունին:

Թող օգնեն մի քանի իմաստակներ Գուրգենի այրած դպրոցը նորէն յօտն կացուցանել: Իսկ անդին ժողովրդական վաղուց կործածեալ Ուսումնարանները, անոնք ոչինչ. անոնք դիմօկրատիկական—ուամկական են:

Հո՛ւ, հու, էլի կ'փրփրի այժմ քրմուհին եռոտանու վրայ:

Թող նա՛ ցնդի, իսկ մենք մեր հետեւեալ

հատուածին մէջ ցոյց կ'տանք թէ ինչպէս այդ պարոնները իւրեանց անձնական շահերնուն համար, իրանց առանձին դպրոցներով՝ ի մեծ վնաս ազգայնութեան կազմակերպութեան Հօլո՞ւէի ամեն տեսակ հիւանդութեանց բաժող ոսկեղօժ դեղահատերը կ'վաճառեն պարզամիաներուն:

Արդ՝ կաղաչենք թող չ'նեղանան այդ պարոնները, զորս ամենքն էլ կ'ճանաչեմք և փոխադարձաբար նոքա էլ զմեզ դիտեն: Կ'յուսանք թէ՛ իրանք ևս վկայեն, որ մենք անոնց դէմ անձնական ատելութիւն մը չ'ունինք բնաւ: Ուստի կ'իսնդրենք խոնարհաբար թող հաճին մեր հետեւեալ հատուածները ուշի ուշով ընթերցասիրելով, որ մեր համազումն է, մեր սխալ վնելը փոխադարձաբար փաստերով ապացուցանել և մենք յանժամ հրապարակաւ մեր խօսքերը յետս կ'կոչենք:

Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ:



Գ.

Յիսուսի դիրքը երեք բոժանումներէն կը բաղկանայ— հրաշքներից, առածներից և բարօ

յական խրատները = Հրաշքին դարը կասեն թէ անցել է, փորթի վրայ հաստատեալ առածները միշտ անմահ են. իսկ բարոյականի պատուէրները իրանց մէջ շատ բան կ'ըովանդակեն: Մենք այն անձանց կարծիքէն ենք, որոնք վերկշի գըրքի վսեմութիւնը առաւել այս վերջին կէտին մէջ կ'տեսնան: « Եթէ ակն քո խաւար է, ամենայն մարմինդ խաւար եղիցի » կասէ այդ Աստուածային դիւբը: « Որ ոչ ծնցի ի ջրոյ և ի հրոյ ոչ մտցէ յարքայութիւն Աստուծոյ » կ'դուշէ երկնային վարդապետը:

Առաջին պարբերութիւնը հասկանալի է. իսկ երկրորդ հատուածը մենք կ'յանդգնինք փոխել այսպէս թէ՛ որ ոչ ծնցի 'ի կրթութենէ և 'ի գիտութենէ, ոչ մտցէ յարքայութիւն Աստուծոյ: Մեր եկեղեցւոյ խնկելի վարդապետներէն մէկի գրուածքին մէջ ասուած է թէ « Կոյր զրկի 'ի ճառագայթից արեղական և ագիտութիւն զրկի 'ի կատարեալ կենաց » և թէ « Լա է կոյր աչօք քան զկոյր մտօք »:

Արդ՝ ո՞վ չ'գիտեր թէ՛ մարդ ըսուած էակը յաշխարհ կ'գայ մի կտոր կենդանի մի: Անիկայ այդ կացութեան մէջ ոչ այս է և ոչ այն. եթէ անոր միայն ֆիզիքական անունդ տալով՝ մարմինը և եթ զարգացնէք, չ'նայելով՝ Պիպլիայի՝ զայն բնութեան թագաւորը յորջորջելուն, պիտի հարկադրուիք խոստովանիլ թէ՛ նա՛ երկրագնդի

վրայ ամենէն չնչին և ամենէն թշուառ արարածն է:

Մեր կենաց ամենօրեայ փորձերն էլ այս կէտը կ'հաստատեն: Սակայն բազմիցս կրկնուած այս մի քանի խօսքերը առաջ բերելով՝ մի կարծէք պարոնայք թէ՛ մենք գիտութեան և կըրթութեան պէտքը փափագեցինք ցուցանել: Բառ լիցի: Մենք համոզուած ենք թէ՛ այս օր մերոնց մէկ մասը՝ այդ արդէն կ'զգայ: Բայց մեր բաղձանքը այդ կէտի նուիրականութիւնը միայն և եթ յիշեցնել էր:

Այո՛ կզգանք մենք. կ'խօսինք, կ'ճառենք այնու ամենայնիւ հին բանասէրներէն մէկն ասած է թէ « զգացմունքէն և խօսքէն մինչև գործքը անհուն տարածութիւն կայ »: Ուստի եթէ իրօք յառաջագիմելու համար 'ի սրտէ աշխատել, ջանալ և վաստակել կ'ցանկանք. եկէք քաջասրտութիւն ունենանք խոստուանել թէ՛ մենք անհամար թերութիւններ ունենալէն 'ի զատ՝ մեր ազգայնութեան անիւր գուցէ տեղէն անդամ չ'շարժեցինք, թէ և քառօրդ դարն անցաւ անոր այդ պէտքը քարոզելնիս:

Արդ՝ մեր այս մի քանի խօսքէն կ'հետևի և դուք էլ կ'խոստովանիք թէ՛ մարդկային ազգի կենաց յառաջագիմութեան բոլոր խորհրդոյ սերմերը ուսման տաճարներին մէջ կ'ըովանդակին: Ուստի մենք էլ իբր անոր մի մասը՝ անշուշտ

մեր ամենէն մեծ ոյժը դպրոցներուն նուիրե-
լու ենք : Սակայն հարկ է գիտնալ թէ՛ որո՞նք
են այդ փրկարար և կենսատու դպրոցները :

Անցեալները Մեծապատիւ Տօքթօր Մէզ-
պուրեանցին հետ մասնաւոր դպրոցների նկատ-
մամբ կարճ, բայց տաք վիճաբանութիւն մը ու-
նեցանք . զորս աստ առաջ բերելը մեր նպատա-
կէն դուրս է , միայն սա կողմէնք ասել թէ՛ աղ-
նիւ բժիշկը մի քանի յարգելի անձանց ներկա-
յութեամբ կ'փափաղէր հաստատել թէ՛ « Ա-
ռանձին դպրոց պահելն էլ ուրիշ արհեստաց
նման մի արհեստ է » : Այո՛ մենք ևս կընդու-
նենք, որ դաստիարակութիւնը արհեստ է և ճար-
տարութեանց ամենէն նուրբը : Սակայն ըստ մեզ՝
ոչ մի ժամանակ անիկայ միւս արհեստների հետ
չկրնար համեմատուիլ . մենք կ'կարծենք թէ
մեր մէջ այս սուրբ գործքով զբաղողները իրանց
սկզբունքը անձնանուիրութեան և պտտասխա-
նատուութեան վրայ միանգամայն պիտի հիմնեն :
Եթէ ընդունենք Յիսուսի դրքի (թողած անոր
Աստուածային վարդապետութեան կողմը) մի
իմաստասիրական հեղինակութիւն լինելը . եթէ
ընդունինք պատմութիւնը և անոր ֆաթթէրն ու
աքցիօնները անշուշտ մեր պնդումն էլ ճշմարիտ
ու արդար է :

Արդ՝ Յիսուս կ'կոչէ « Ամեն ասեմ ձեզ ,
եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռա-

նիցի , ինքն միայն կայ . ապա եթէ մեռանիցի
բազում արդիւնս առնէ » : Մենք պարոններ ,
այդ բազում արդիւնս առնող ցորենը անձն կը
նկատենք : Ուստի կ'պնդենք , որ եթէ մարդուն
մարմնոյն սնունդ ճարելու կամ հարուստի մը
համար խօսելով պատրաստ կերակուրը ախոր-
ժանօք ուտելու և անվնաս մարսելու համար աչ-
խատել և քրտինք թափել պէտք է . ուրեմն ա-
նոր հոգեկան կարողութիւնները ըստ արժան-
ւոյն զարգացնելու մասին, որ մարմնէն շատ դժ-
ուար է , անպատճառ բազում արդիւնս առնող
ցորեն այսինքն անձնանուէր մարդիկ հարկ են :

Ահաւասիկ թէ գիտութիւնը և կրթութիւ-
նը ինչ միջոցներով կ'զարգանան : Սակայն դու-
ցէ կ'դտնուին անձինք , որոնք կ'պնդեն թէ՛
« Ձե՞նչ օգուտ զաշխարհ ամենայն շահեսցի և
զանձն իւր տուժեսցի » : Մենք այդպէս պարզ
մտածողներին խօսք չունինք , մեր խօսքը այն
անձանց է , որոնք իսկապէս մարդ լինելու կո-
չումն ունին , որոնք արդային կենսագրութիւնը
նորանոր զարդերով փայլեցնելու տրամադրու-
թիւնը կ'տածեն իրանց սրտի խորքերումը և
վերջապէս որոնք կ'յիշեն Յիսուսի մի ուրիշ խօս-
քը թէ՛ « Ես եկի առաւել առ ոչխարս կորուս-
եալս տանն իսրայելի » :

Աստ թող աւելորդ չ'համարուի 'ի միտ ա-
ծել Հայ բանաստեղծի խօսքը թէ « Եթէ տըր-

ուածը յետ առնուի, նորան կասեն առևտուր»):

Արդ՝ այս տեսութեամբ խորհուրդ կտա յինք անկեղծաբար գրականութեան ասպարէզն մուտ գործող մերայնոց՝ ազգասէր և այլ նուիրական տխրոսները թեթև կերպով չ'գործածել:

Տփլիսին մէջ հանգուցեալ Ֆօնդոյեանց՝ յօգուտ Հայութեան 120 հազար բուբլի թողեց՝ բայց նորան տապանագիրը այդ փառաւոր տխրոսով պսակուելու չ'արժանացաւ, ըստ որում այն տեղի Հայ ենդերիդեհեան պնդեց թէ՛ «Այդ անժառանգ մեռնող անձը իբր լաւ մարդ իւր պարտքը կատարեց ուրիշ ոչինչ»: Ներսէս Աշտարակցու ոսկորները իր տապանագրին համար հարձակումներ կրեց: Իսկ Պօլսին մէջ, զարմանք և ուշադրութեան արժանի բան, ազգասէր տխրոսն առնելը առուողտէն դիւրագնի է, վիւփէրթէն ու ծնէրեկէն էժան է: Կ'փափագի՞ք ունենալ պարոններ, այդ սրբազան անունը, սուէ՞ք մի խմբագրի կամ մի վարժապետի, մի դպրոցի կամ մի ընկերութեան մի քանի զըշուտ միւս օրը փառաւոր կերպով կ'պսակեն ըզձեզ այդ նուիրական անունով:

Կորէ՞ք խայտառակ մարդիկ. կորէ՞ք ապականեալ սրտեր: Երանի, հազար երանի որ սըխայրուած լինէր, Գրիգոր Արծրունին իւր տեսութեան մէջ թէ՛ «Որովհետև Հայ Պօլսեցին իսկապէս Հայ չ'է, նա՛ մի տեսակ այլանդակ

խառնուրդ է, թեթևամիտ Ֆրանսացու, 'հեշտասէր Օսմանցու և փչացած Բիւզանդացու»:

Արդ՝ պարոններ, եթէ այս ցաւալի մտքերը փոքր բացառութեամբ ճշմարիտ են, յայնժամ աշխատութիւնն ու իրական շարժումը միայն և եթ զմեզ կրնայ փրկել այդ կեղտէն: Իսկ այդ յստակումը, այդ պրոպատիկէն յայտնի է, որ ճշմարիտ գիտութեան բովն է:

Ուսման տաճարները անտարակոյս երկու գլխաւոր ու հիմնական սրբազան նպատակ ունին — դաստիարակել և ուսուցանել կամ այլ խօսքով կրթութիւն և գիտութիւն սփռել: Եթէ այսպէս չ'լինէր, յայնժամ ըստ մեզ այնքան պախարակելի չ'էր լինիր, երբ մի ազգի սերունդը գործնականապէս իր լեզուն սովորէին յետ՝ այլ ցեղի մը դպրոցները յաճախէր, և բացի այս մի քանի հասարակութեանց համար խենդութիւն անգամ կ'սեպուեր դպրոցների վրայ ստակ վատնելը, զի դիւրութիւն ունէին իրանց զաւակները այլոց դպրոցն զրկելու: Սակայն կառարկուի անշուշտ թէ՛ լեզուն (որ մի ցեղի ազգայնութեան շողկայներից ամենէն գլխաւորն է) գրականապէս զարգացնելու համար անհրաժեշտ է իւրաքանչիւր ազգի իւր դպրոցն ունենալ: Այո՛ ճիշտ է ու մեր ասելիքն էլ այս տեղ կ'հանգի. և նոյն իսկ այդ մայրենի լեզուի ուսման մէջն է կրթութեան սրբազան սերմը: Ուստի կը

հետևի թէ՛ Հայ դպրոցը Հայ մանկան երկու կերպ պիտի զարգացնէ իբր մի գիտնական մարդ, իբր մի կրթեալ Հայ . Գաղղիացին իւր սերունդը կրկնակի պիտի մեծցնէ — իբր մի ուսումնական անհատ իբր մի դաստիարակեալ ժրանսուզ և այլն : Իսկ այս մտաց հակառակ գիտութեամբ և կրթութեամբ օրինաւորապէս չ'ըլարգացած անձանց՝ ուղն ու ծուծն ՚ի հանդէս հանած է հասարակական առածը թէ՛ « Մեղըը շան տիկումը » :

Համաձայնեցէ՛ք պարոնայք, որ ասկէ կարծ և զգու բացատրութիւն չ'լինիր :

Արդ՝ մեզնից շատերը անշուշտ գիտեն թէ ի՞նչ են Եւրոպական հսկայ արհեստանոցները և թէ ո՞ր աստիճան նոքա կատարելագործեալ են : Այնպէս որ անոնք մէկ ծայրէն բուրգը և բամբակը ընդունելով՝ մի միջոց հետ՝ միւս ծայրէն պատրաստ ասուին և կտաւը կտոր կտոր կարտադրեն : Սակայն ո՛չ ոք անշուշտ չէ լսած թէ՛ կայ մի այնպիսի արհեստանոց, որ հետզհետէ այլ և այլ նիւթեր այսինքն, կերպաս, աշտանոկ, սեղան, լուցիկ և այլն պատրաստ է :

Այո՛ կ'վկայենք չ'է լսած : Բայց կաւետենք ձեզ, Պօլիսն ունի մի այդ տեսակ արհեստանոց, որի վրայ դուք ուշադրութիւն չէք դարձրել, որոյ մասին ինչպէս և ամեն բանի պարզութեամբ խորհել էք :

Մեր նիւթը պարոններ, Բոպէրթեան դուլեթն է :

Անիկա մի հրաշալի ճեմարան է, այն տեղ բարձրագոյն գիտութեանց հետ՝ ազդաց և ազանց կրթութիւնը կայ : Նա՛ է, որ գիտնական մարդ, գիտնական պուլիար . գիտնական մարդ-գիտնական Հայ, ուսումնական մարդ, ուսումնական Յոյն, ուսումնական մարդ, ուսումնական Օսմանցի, իմաստուն մարդ, իմաստուն Անգղիացի, իմաստուն մարդ-իմաստուն Հրեայ հետ զհետէ կ'պատրաստէ մարդկային ցեղի յառաջադիմութեան համար :

Կեցցէ ճարպիկութիւն :

Տեսա՞ք, որ Պօլսին մէջ Հօլուէի ամեն տեսակ հիւանդութեանց բուժող ոսկէզօծ դեղահատերը աղէկ կ'վաճառուին :

Որ ունիցի անանջս լսելոյ լուիցէ :



Դ.

Մեր հանգուցեալ Նալբանդեանցը ասած է թէ՛ « Լաւ է Հայ սերունդին տգէտ մնալ, քան թէ օտար կրթութեամբ գիտութիւն սովորել » : Մեր կարծեօք, քանի որ ազգայնութեան դաշտափարը կայ, այս միտքը մի անհերքելի ճշշ

մարտութիւն է—արցիօմ է : Սակայն Կոսմոպօ-
լիտները աղափ են այլապէս խորհիլ : Միայն մեզ
հետաքրքիր է իմանալ թէ՛ ի՞նչ խարիսխի վրայ
կ'հիմնեն իրանց դադափարները այն անձինքը ,
որոնք այս ինչ կամ այն ինչ դպրոցին մէջ դի-
տութիւնները թողնելով մայրենի լեզուն այս
կամ այն օտար լեզուաւ աւանդելը օգտակար կը
սեպեն :

Պարոններ , հարկ է աղէկ ըմբռնել թէ՛ մի
արհեստաւոր իւր զբաղմանց մէջ , ո՞ր աստիճան
էլ կատարեալ լինի , առանց գործիքի ոչինչ չի
կրնար առնել , պիտոյ է երբէք չ'մոռանալ , եր-
բէք չ'ժխտել , որ մի ազգի դպրոցին ամենէն
օգտակար և ամենէն պիտանի գործիքը իւր լե-
զուն է . անոր տեղ երբէ՛ք մի այլ բան չ'կրնար
բռնել , իսկ եթէ բռնէ : Դպրոցն արդէն կորց-
րած է իւր նպատակը :

Արդ՝ Հայ ազգ ասելը ոչ մեր մասնաւոր ճոխ
իշխանները են , ոչ այլ և այլ տէրութեանց մէջ
գտնուող պաշտօնեայք են , ոչ առանց հասարակ
ժողովրդեան ցաւայի և մեծ կարեկցութեան ար-
ժանի վիճակը դիտելով ասլորող ուսումնական
համարուած երիտասարդներս ենք և ոչ մեր
սուրբ ու սրբազան հարքն ենք : Հապա ազգի խա-
րիսխը հիմքը և հաստատութիւնը հասարակ
ժողովրդն է . նա՛ է Հայութեան կառքի սեռն :
Ուստի պիղծ և անիծեալ են ամեն տեղ այն

ձեռքերը , որք 'ի վնաս անոր կ'գործեն . Անա-
ֆեմայնզովեալ լինին ամեն անոնք , որք լրբա-
բար մի քանի կեղծ փաստարանական խօսքերով՝
իրանց անձնական շահը անոր վնասներին մէջ
կ'որոնեն :

Մեզ նման ազգայնութիւն չունեցող անկ-
եալ , լքեալ մի ժողովրդի համար իրօք փրկու-
թեան յոյսեր իրանց սրտի խորքերումը տածող-
ներ եթէ կան . թող աճապարեն , շտապեն հա-
սարակական դպրոցները յօան կացուցանել . ո՞ր
են արդեօք վիպասանական հիացմամբ բացա-
գանջութիւններ անող մեր պարոնները , նօքա
թող զՀայաստան , չ'են տեսներ արդեօք իրանց
քթի տակ , Պօլսոյ մէջ , ժողովրդական դպրոց-
ների անկեալ վիճակը :

Տասն տարի առաջ տէր Յովսէփ անուն Ե-
րևանցի մի քահանայի հետ՝ ըստ սովորութեան
նոյն քաղաքի դպրոցին տարեկան հարցաքննու-
թեան ներկայ լինելու համար , Սոււբ էջմիած-
նայ կողմէն մի անձը խնդրելու նկատմամբ
կաթուղիկոսին ներկայանալիս՝ Հայրապետը մեր
նուաստութեան հետ ունեցած խօսակցութեանց
մէջ կ'պնդէր թէ՛ « Ամենէն առաւել Հայաս-
տանեայց եկեղեցւոյ հոգևոր և մարմնաւոր զա-
ւակաց առ միմեանս ունեցած առնչութեան
ամրապնդման համար պիտի աշխատեմ » : Այս
միտքը իբր խօսք մնաց , թէ իրական ջանքեր

եղան, չենք գիտար: Ի հարկէ ժամանակը կը պորզէ: Իսկ մենք այն միջոցին այդ վսեմ նիւթը մեզ թեմայ-ընտան ընտրելով՝ Արարաւ ամատեարին մէջ կրցածնուս չափ բացատրեցինք:

Այս վսեմէ այս կէտը՝ կ'կրկնենք. ոչ միայն հողեւոր և մարմնաւոր ականաւոր Հայերու համար, այլ և ընդհանրապէս ազգայնութեան անհատից ամեն կարգի անձանց նկատմամբ: Սակայն չէ հարկ մտնանալ՝ որ այս վսեմ կէտը ևս զարգացնելու արդիւնաւոր հողերը կրկին դպրութեանց տներն են: Նոքա են, որ իշխանի զաւկին և սինդորի որդուն, ապագայ քահանայապետին և ապագայ ժամկոչին միենոյն նստարանի վրայ բազմեցնելով՝ սիրելի եղբայր, պատուական ընկեր և սերտ բարեկամ կառնեն: Անտարակոյս այս մտօք է, որ քանի մը երկիրներին մէջ տղաներէն ՚ի զաւ երկու սեռը միևնոյն տախտակին վրայ կ'նստեցնեն:

Ասացէք, պարոններ, խարդախ ու նենգաւոր չե՞ն այն մարդիկները, որոնք հասարակութեան այն ամենէն նուիրական կէտը առ ոտն կ'կոխեն: Ասացէք անկողմնակալ ոգւով մասնաւոր դպրոցները չե՞ որ հասարակութեան բարձր կարգի տղաներին՝ անոր ստոր դասակարգի զաւակներէն բաժանելով առնչականութիւն աստած բանին մեծ և անբուժելի հարուած կ'տան:

Ասացէք ո՞վ չ'գիտեր մեզնից թէ՛ խնձոր կամ ընդոյզ վարունդ կամ կաղին և այլ չնչին իւրեր վաճառողները անդամ չեն համաձայնիր և չ'են թայլ տար իրանց ծուխերին ջուկել և ընտրել մի առ մի առած ապարանքին: Եւ կատարելապէս իրաւունք էլ ունին. վասն զի տակն մնացածը ո՞ւմ պիտի ծախեն, իսկ եթէ յաջողի սպառել էլ, այն էլ խիստ ստոր դնով:

Ասացէք ձեռքերնիդ խղճմանքնուդ վրայ դրած այս կէտին չ'նմանիր արդեօք մասնաւոր դպրոցների ընթացքը. երբ նոքա ազգային ուսումնարաններին նիւթապէս օգնելու կարողութիւն ունեցող, ու այլ և այլ պարագաներով հասարակութեան վրայ ազդեցութիւն ունեցող անձանց՝ զաւակները կ'յափշտակեն իրանց չլացուցիչ պրագրամայով, մեծաբան խոստումներով և այլ անթիւ ծուռ և մուռ միջոցներով (1):

Հապա տակի մնացածները թող անոնք փտտին, անոնք ուամիկներ-դիմկրատներ են:

Մի այլ կերպ խօսինք, յայտնի է, որ պարոնայք, ամեն տեղ, ամեն հասարակութեանց մէջ յարստամ մի կարգ անձինք հարստութեամբ և ուրիշ բազմաթիւ հանգամանքներով իւրեանց

(1) Այդ ծուռ ու մուռ միջոցները ու նոյա այլ արժանիքները եթէ հարկ լինի ուրիշ յօդուածով մը պիտի բացատրենք:

չընկալատելոց վրայ մեծ ազդեցութիւն կունենան : Մնհերքելի է թէ՛ այդ տեսակ մարդիկը եթէ կամին կամ եթէ կարելի լինի նրանց շարժել , մեծ գործք կրնան տեսնել : Սակայն երբ դրանց զուակները ինչպէս ասինք կ'յափշտակուին եզրիթական միջոցներով ասացէ՛ք պատճառ եղած չե՞ն լինիր այդ նախապէս անտարբեր մարդոց բոլորովին առանձնականութեան (ինտիվիտալիթէ) մէջ նետելու :

Անոնց արդէն շարժելը դժուար էր . իսկ արդ պիտի խորհին թէ՛ « Մեր ինչին պէտք եղբարք , մենք մեր զաւակները լիսէն տուած ենք » :

Աստուած շատ քաջել չ'տայ , ըստ Միլետոն նեցւոյն :

Արդ՝ կեղքակացները թէ՛ մասնաւոր դըպրոցները ո՞ւր և ինչպէս էլ որ լինին , նոքա ազգայնութեան ուսումնարանների կազմակերպութեան նախապէս նիւթականութեանը կ'վնասեն , որ ասելէ կենսագրաւ առնել . երկրորդ առնչականութիւնը առ ոտն կ'կոխեն , որ ասելէ ազգի միութիւնը քանդել և յետոյ պիտանի անձանց կ'յափշտակեն , զոր էլ չենք գիտար ինչ անուանել :

Մեր լսածին նայելով՝ անոնց կողմէն կառարկուի եղեր թէ՛ այն շընտրեալ աղաները գիտութեամբ և կրթութեամբ զարգացած իրեանց

հարց տեղն բռնելով՝ օր մը աւելի ազդու կիրպով պիտի գործեն եղեր : Իսկ մենք մինեղանաք , պարոններ , առածն անխտտելի է . մի կողմէն տաճկական մի ասացուածք կ'յիշենք , որ կասէ « Մի՛ մեռնիր էշ , առոււոյտ բուսնի , որ ուտես » միւս կողմէն կ'համարձակինք հարցնել թէ՛ ի՞նչ երաշխաւորութիւն ունին այդ պարոնները իւրեանց ասածը ապացուցանելու . քանի որ կրնայ ըլլար , մանաւանդ Օսմանեան հողին մէջ , որ այդ հարուստները այլոց տեղի տալով՝ անոնց ժառանգները՝ իրանց օրինաւոր դաստիարակների նման նորանոր առանձին դպրոցներ հիմնելու կարօտ ըլլան : Սակայն եթէ ընդունինք անգամ , որ իրանց դպրոցները իբր իրաւ պրօգրամնուն համաձայն գործելով՝ օր մը իրանց ասածին նման անգամ լինի , իրանց աչակերտները սկսին գործել : Սակայն հարկ է չ'մոռանալ , որ ապագայ տալու օգուտնին , երբէք չ'կրնար փոխարինել ներկայ տուած վնասունն :

Նոքա կասեն եղեր թէ՛ ազգային ուսումնարանները չէ կարելի բարեկարգել : Մենք էլ կ'ալնդենք թէ նոցա անբերեկարգ վիճակի մէջ մնալու առիթներէն ամենէն գլխաւորը՝ նոյն իսկ իրանց դպրոցների գոյութիւնը է , ըստ որում եթէ նոքա չ'լինին , հասարակութիւնը անշուշտ իր ուժերը միացրած իր գլխի ճարը պիտի տեսնէ :

Արդ՝ ընթերցասէր ազգայինք , գուցէ դեռ

մուցած չեն մասնաւոր դպրոց պահօղների մէկի անպատկառ և անամօթ հրատարակութիւնը թէ՛ «Պ. Թերզայանցի ձեռամբ իւր դպրոցին մէջ համալսարանական դասեր կ'տրուին եղեր» : Էյ սուտ ե՛նք, որ Պօլսին մէջ Հալո՛ւէի դեղահատերը լաւ կ'փածաւուին :

Օսմանեան տերութիւնը մինչ ցարդ համալսարան, այդ խօսքի արձակ մտօք չունի. և չի կրնար ունենալ, քանզի զայն ունենալու և անոր ուսանողներ հասուցանելու համար նախապէս եթէ՛ չասենք հազարներով գոնէ հարիւրներով լիսեներ հարկ են : Ռուսիայ հինգ համալսարան ունէր, մէկն էլ Օսեսայի մէջ մինչև որ բացաւ ճակատն քրտնեց :

Թողէք համալսարանները լիսեները մեծ գործք կրնան կատարել. ուստի անոնց հաստատութիւնը նիւթական և մտացական ահագին աշխատանաց կարօտ է : Տփլիսիսի Ներսէսեան դպրոցը, որ արդէն յիսնամեայ Յոբելեանը տօնեց, և որը տարեկան 45—50 հազար բութի ծախս ունի իւր 30—35 պաշտօնեայններով՝ մինչ ցարդ կառավարութենէն լիսէ կոչուելու իրաւունք չկրցաւ ստանալ :

Սակայն երջանիկ Պօլսին մէջ, Բոսպորի բանաստեղծական եզերքին վրայ, փափազող տիրացուն ո՛ւր որ ուզէ լիսէի պրոգրամով՝ նորանոր լիսեներ կրնայ հաստատել :

Երեանեցու լեզուաւ խօսելով ի՞նչ բախտաւ վար են եղեր Պօլսոյ Հայերը :

Արդ՝ չ'մոռանանք ասել, որ ըստ մեր կարծեաց այդ լիսեները 100 ոսկի արժողութեամբ մի աւարկայ 100 զրշի փոճառելու կ'նմանի, ըստ որում ներկայացրած թղթերնուն բովանդակութիւնը լիսէի պրոգրամէն գուցէ մի փոքր էլ անդին անցնի. այն ինչ եղած ծախսերը, վարժապետաց տրուած թոշակները, երբը, մուտքը ուշադրութեան արժանի են : Բայց թշուառականներ մի մոռանաք, որ գիւրագնի ծախուած ապարանաց համար ընդհանրապէս մարդոց վճիռն սարսափելի է : Նոքա ձեզ կասեն, ձեր ապարանքը կամ գողունի է և կամ անաղնիւ նիւ նիւթը փոխանակ աղնիւի կ'փափազէր վաճառել :

Չ'լինի թէ՛ պարոններ, դուք էլ հին եզութիւններու ճամբան բռնել էք : Մենք այս մասին չենք պնդեր : Միայն այս կէտերն ինկատի ունենալով՝ կ'տարակուսինք, ուստի ձեզ կը մնայ, ձեր հօգուն մեռնիմ, ազգասէր պարոններ, փարատել մեր տարակուսը :

Մենք մեր երկրորդ հատուածին մէջ ասեցինք թէ՛ առանձին դպրոցները ազգայնութեան ամբողջ գործող մարմնոյն դէմ անուղղակի յանդիմանութիւնք և անպատուութիւնք են :

Արդ՝ այսպէս ասել օրինակ տերութեան

մը արտաքին կամներքին գործոց նախարարութեան պաշտօնէից մէջէն՝ մի գրագիր հրատարակն իջնելով՝ համարձակի ասել թէ՛ այդ շրջանին մէջ բոլոր գործնէութիւնը իմ մատիս վրայ կ'դառնայ, ամեն օրինաւոր անօրէնութիւնք իմ մէջ կ'բովանդակին : Չէ՞, որ եթէ այդ պարոնի ասածը՝ ճիշտ անգամ լինի, որ չէ կարելի, նորէն նա սարսափելի պատասխանատուութեան կենթարկի . վասն զի իւր քարոզածը նոյն շրջանի ամբողջ կազմակերպութեան դէմ յանդիմանութիւն և անպատուութիւն եղած կ'լինի :

Ասացէ՛ք անկեղծօրէն, քաջասրտութիւն ունեցէ՛ք խոստովանել թէ՛ նոյնը չէ արդեօք երբ մէկը կասէ անուղղակի կերպով թէ՛ Հայ ազգը իւր համայն ժողովներով չսունի մի այնպիսի դրպրոց որպէս իմն է :

Մենք Սուրբ Խաչի դպրոցէն երկու երեք տղայ կ'ճանաչենք, որոնք ներկայ թուականի մարտի սկիզբներին Պէրպէրեանի լիսէն մտնելով՝ երեք ամիս յետ եղած քննութեան մէջ մի քանի առարկայէն առաջին մրցանակն առին : Գպրոցին անօրէնը զանոնք իւր միւս աշակերտաց հետ՝ (թէ և միւսներն էլ այդ կարգէն են) իւր փայլուն պարգեւաբաշխութեան կոչունքին չ'կարմրեց ի հանդէս դուրս բերել իբր իւր մշակած պարտէղի պտուղները :

Ասացէ՛ք արդ կ'լինդրենք, եթէ՛ այս վար-

մունքը Սուրբ Խաչի դպրոցին ամբողջ օրգանին զէպ անպատուութիւն և յանդիմանութիւն չէ՞. ուրեմն ի՞նչ է : Մեզ կ'թուի թէ այդ օրգանէն ամենէն պատուասէրը լիսէի անօրէնին եթէ մենամարտութեան հրաւիրէր բոլորովին իրաւացի կ'լինէր :

Ահաւասիկ մասնաւոր դպրոցները հասարակական բոլոր ուսման տաճարներին հետ այսպէս կ'վարուին անտարակոյս : Այլապէս, ի՞նչ ասել է, ի՞նչ մեծ մեծ կ'բրդեն, ի՞նչ մեծ ճայթոց ու որոտմունք, ի՞նչ գոռում և գոչում : Մեր դիտցածը երկու երեք տարուան մէջ տղաներին հազիւ օրինաւորապէս գրել կարողալ կարելի կ'լինի սովրեցնել մի քանի ուսմանց փոքրիկ տեղեկութեանց հետ : Ուստի բնականապէս կ'հետեցնենք թէ՛ այդ պարոնները ինչ որ կասեն կամ սուտ է և կամ անպատկառ կերպով այլոց աշխատանքը իրանց կ'սեպհականեն :

Հաւատացէ՛ք, պարոններ, որ առանձին դպրոցները ոչ մի ժամանակ սիստեմաթիւքական չեն կրնար լինէր . եթէ անոնց դաստիարակները (թող Պոլսոյ արդի երիտասարդներին), մինչև անգամ Եւրոպիոյ ամենէն ականաւոր պետագողների յար և նման Հայ անձինք ևս լինին : Նոքա միշտ ազգայնութեան մեծ ծառէն կըտրուած ոստի կ'նմանին, որ թէպէտ առ ժամանակ մեր թեթեւօլիկ տեսութեան կանանչ կե-

րևի : Սակայն շուտ թէ՛ անադան կ'չորանան առանց օգուտ մը տալու , որովհետև նոքա ազգայնութեան սրտի վրայ հաստատեալ չեն . այլ անձնական շահերի վրայ հիմնեալ են : Մեր ասածն ապացուցանելու կարծեօք օրինակներ պակաս չեն : Նոցա օգուտն իրանց տուած ահագին և անբուժելի վնասներուն հետ՝ ի զուր և ի նանիր ազգին քսակէն մի քանի հազար ոսկի կորզելը կ'լինի :

Հետաքրքիր չէ՞ ձեզ իմանալ թէ՛ ի՞նչ տարին արդեօք դպրոցէն Ամբրոսիոս վարդապետի աշակերտները իւրեանց այնչափ ծախած ստակների փոխարէն :

Մենք շեշտելով կ'կրկնենք թէ՛ առանձին դպրոցները երբէք սիստեմաթիքական չեն կըրնար լինիր : Այս միտքը ուսումնարանական կազմութեան վրայ փոքր ի շատէ տեղեկութիւն ունեցող անձը աղէկ կըմըռնէ . մենք չենք կարծեր թէ նոյն իսկ մասնաւոր դպրոցների տնօրէններն ևս այս կէտը չ'հասկնալու չափ յիմար լինին՝ թէ և խոստովանելը իրանց բանին չը դար (1) :

(1) Լսածնուս նայելով կըսուի եղեր թէ՛ թող գիտութիւնը եւ կրթութիւնը տարածուի , իսկ միջոցը ինչ էլ որ լինի արդար է : եւ բացի այս մի՞թէ մասնաւոր դպրոցները ամենէն մեծ և նշանաւոր ազգաց մէջ չ'կան :

Ամեն օրէնք , սլարոններ , ամեն գործնէութիւն ,

Անցեալները մեր մի քանի բարեկամաց ներկայութեամբ պարոն Պէրպէրեանցի պաշտօնեաներէն մէկը՝ անզգուշութեամբ հետևեալ ուշադրութեան արժանի պարբերութիւնը արտասանեց թէ՛ «Հարկ է շնորհակալ լինել Սուրբ Խաչի դըպրոցի կործանումէն , զի անոր տուած աշակերտներով վերջապէս կըցանք քիչ չատ օրինաւոր մի չորրորդ կարգ ունենալ » :

Բացէ՛ք պարոններ , մի նոր մասնաւոր դըպրոց , մի թէ՛ դուք գիւթական զօրութիւն ունէ՛ք կարող անձանց տղայոց ձեր ուսումնարանին

ամեն շարժում անտարակոյս բացարձակ եւ սահմանափակեալ են : Ազիաւոր ըմպելիքներ գործածել կամ չ'գործածել , այս ինչ կամ այն ինչ կենդանու միսը ուտել կամ չ'ուտել , մի դպրոց կամ մի արհեստանոց առանց կառավարութեան հրամանի բանալ կամ չ'բանալ եւլն . եւլն . անշուշտ սահմանափակեալ հրամաններ եւ պատուէրներ են : Իսկ կրակը կայրէ , կենդանին առանց սնունդի չ'ապրիր , իսկական մեռելը ձայն չ'տար եւլն . եւլն . անպատճառ բացարձակ իրողութիւններ են :

Արդ՝ ամեն փոքր 'ի շատէ գիտնական գլուխներ եթէ մասնաւոր ինչ , հաճին խորհիլ պիտի տեսնեն անշուշտ թէ՛ վերոյրջեալ առարկութիւնները ամեն աշխարհի , ամեն երկրի , ամեն ազգի եւ ամեն ժողովրդի համար չէ , զի ազգաց եւ ազանց իւրաքանչիւրը իրա յատուկ վարքը , բարքը , սովորութիւնը , գիրքը վիճակը եւ ի մի խօսք կազմակերպութիւնը ունի Ռուսիայ իւր հողի անազին տարածութեան մէջ բազմաթիւ պլաստոն ցեղերի տէր լինելով գոյցէ ազէկ կան է , որ առանց իւր յատուկ հրամանին զըպրոց բանալն արգելած է . այն ինչ Գաղղիայ իւր երկ-

յարմարցնելու, մի յարմարութիւն, զոր ազգայնութեան հաստատութիւնները երկար տարիներին մէջ մեծամեծ զոհերով մի աստիճան հազիւ ձեռք բերած են: Այն էլ հասարակութեան սրտին վրայ հիմնեալ լինելուն համար:

Այսօր ձեզ մի քանի մանուկ կ'ըբերեն, որոնց հետ ստիպուած էք նոր գործքի սկսել, վաղը մի երկու տղայ կ'դայ, որոնք երրորդ կամ չորրորդ կարգի արժանի են. միւս օրը ձեր այդ նոր լիսէլ բարձրագոյն նստարաններուն վրայ բաղմնելու արժանի պատանիներ կը ներկայացնեն ձեզ և՛ն. և՛ն:

րին մէջ այդ օրէնքին վրայ բնաւ ուշադրութիւն դարձրած չէ. Մարտիլեայէն բռնած մինչև Գալէ ուր որ կ'ըզդձաք ուսման տաճարներ բացէք, բաւական է որ դուք այդ մասին արժանաւորութիւն ունենաք եւ համակրութիւն վաստկէք, կառավարութիւնը ձեզ բընաւ չ'հարցնէր: Մոսկովայի եւ Փեթերսպուրկի մէջ Հայք խիստ ազատ են, իսկ Հայաստանումը, այդ ուրիշ հարց է. Լծնորային մէջ ապաստանած քաղաքական մի յանցաւոր բոլորովին տարբեր վիճակ ունի քան մի այլ տեղ:

Գերմանացի մի մանուկ ո՞ր եւ ի՞նչ կարգի մասնաւոր դպրոցին մէջ կուզէ թող ուսանի, միասաբեր չ'է բնաւ Հանրական գիտութեան եւ կրթութեան երբէք արգելք չ'կրնար լինել, զի այդ դպրոցը միշտ փոքր է, յաւէտ չնչին է իւր շուրջն պատած ազգայնութեան աջագին եւ անհուն նիւթական եւ մտացական ուժերին առաջ: Իսկ աստ մեր մէջ նոյն իսկ այդ հասարակական ուժը նուազացնելու ու յափշտակելու զօրեղ առիթ լինելով հանդերձ իւր սուրբ նպատակէն եւս այնքան հեռի է, որքան մենք Գերմանացիներէն ստոր ենք:

Ասայէ՛ք ծառայեմ ձեզ, մեկնեցէք երկմտութիւնս, ի՞նչ պիտի անէք այս խառնաշփոթութեանց մէջ, կարկըտանը փոքր, պաշտառուածքը մեծ, ծայրը ծայրին երբէք չ'դար:

Մենք աժօթ չէ հա՛, կ'խոստուանինք որ խեղբերնիս չհասնիր, չենք կրնար թափանցեր այդ խորը խորհուրդներին:

Սակայն կերելի թէ Տիգրանակերտէն մի նամակագիր այդ խորհրդներին թափանցեր է, ըստ որում նա՛ Լրագիր թերթին մէջ իւր գըրուածքին միջոցաւ կ'ինդրէ որ իր հայրենիքէն զրկուած տղային լաւ խնամք տանել, որպէս զի նա՛ յետ դառնալով գործէ:

Վատ չէ, Աստուած շատ քաշել չ'տայ, նորէն կ'կրկնենք:

Արդ՝ թող սպասէ Տիգրանակերտի ստուար Հայ բաղմութիւնը, որ Պօլսէն մի մասնաւոր դպրոց իրան հասած պտուղ զրկէ:

Այսպէ՛ս ուրեմն Հայերը անուշ երանքերով կ'ննջեն:

Մենք կ'բաղձայինք ի սրտէ, բարեկամ, որ դուք ձեր մէջ. հասարակութեան անդաստանի վրայ գործէիք, հայրենի նուիրական հողին մէջ, ժողովրդեն գիրկը քրտինք թափէիք:

Աղէկ ի միտ առէք: Ուրիշ բան է այդ սուրբ աշխատանաց բուռն հարկանելէն յետ՝ դուրսերը պատանիներ զրկել, բարձրհոյն

ուսմանց համար : Ուրիշ բան է , գահվէ խմող հոսոս , զրկածին սպասել , ինչպէս դուն կանս , որ դայ գործէ :

Տեսաք մասնաւոր դպրոցները մինչև ուր կարձակեն իրանց ճառագայթները :

Կեցցէ ճարպիկութիւն :

Կեցցէ աղփաութիւն :

Մենք անկեղծաբար և ի սուրբ սրտէ խորհուրդ կ'տայինք այդ պարոններին . եթէ իրաւ իրանց ներկայացրած բարձր պրոգրամայով կըրնան ազգի անդաստանը մշակել , առանց մի վայրկեան իսկ յապաղելու նետել իրանց ազգայնութեան զաւակների գիրկը , հասարակութեան մանուկների գոգը , միասին տանելով շըլացուցիչ ճանապարհներով վաստկած համակրութիւններն և աչակերտաց խառնելու միւս եղբարց և քերց հետ , որով բաժանեալ ոյժերը միացնելով մի վսեմ գործք կատարած կ'լինէին :

Թող նոքա կեղծ և զուր բաստաբանական առարկութիւններ չ'անեն թէ՛ այնտեղ մենք անկախաբար չ'ենք կրնար գործել և թէ մեր մասնաւոր դպրոցները եթէ չ'լինին ազգի զաւակները օտարներին պիտի դիմեն :

Մեր ժամանակէն 20 տարի առաջ ամիրայից անկախութիւնը բռնութիւն է գոչեցինք , բռնութիւն է դուռացինք մինչև որ Սահմանադրութիւնը հաստատուեց : Սյուր ազգային

գործոց մէջ ազատորէն շարժող մէկին տեսքօթ կ'կոչենք , եւ վստահ ենք թէ՛ դուք ձեր աչակերտաց պատմութեան դասախօսելիս՝ ինքնիշխանաբար ներդրողներին բռնապէտ կանուանէք : Ոտրեմն ինչո՞ւ , զարմանք բան , դուք ձեր դործնէութեանց մէջ անկախութեան կ'փափագինք :

Արդ ի՞նչ կ'վերաբերի երկրորդ առարկութեանց՝ նախ հետաքրքիր է ստատիքաբար իմանալ թէ՛ քանի Հայ տղայ կըցան օտարների ձեռքէն զերուցանել . չէ՞ որ մեր օտարասէր ճենթիմենթները միևնոյն գրաստը կ'քչեն . չէ՞ որ իրանց աչակերտները գուցէ առանց բացառութեան բոլորն էլ կամ ազգային ուսումնարաններիցն են և կամ միմեանցից յախշակեալ բայց եթէ՛ մի ըստէ ընդունինք թէ՛ իրաւ այդ դպրոցները իրանց պսպղուն վիճակներով՝ ազգի զաւակներին յօտարս դիմելէն կ'կասեցնեն : Միթէ ատոնց աչակերտաց իրանց դաստիարակներով հանդերձ՝ ազգի ոյժին հետ միացնելով՝ հասարակական ուսման տաճարներին չէի՞ն կըրնար տալ մի այդպիսի վայլ , որով՝ ազգը մեր առաջ բերած վնասներէն ազատելն ի դատ՝ նոյն նպատակը ուրիշ որբազան կէտերու հետ առաւել ու առաւել կ'նուիրագործուէր .

Արդ՝ եթէ անոնք(1) մեզ չլսեն , եթէ չը

(1) Խորին ուշադրութեան արժանի մի կէտն էլ

խոնարհին ազգի պահանջներն առաջ, չլուծան
յանցանքնին քաւել: Մենք յայնժամ ստիպուած
կլինինք ասել թէ՛ այո՛ ինչո՞ւ անեն ադ զիչո՞-
ղութիւնը, քանի որ ազգային դպրոցներին մէջ
չեն կրնար այդ գումարը վասակել, չեն կրնար
իրանց լեզուաւ խօսելով Արիստոկրատ ապրել,
ալա շիք շրջիլ և այլ չենք գիտար ինչեր անել:
Իսկ ազգին կը մնայ խորհիլ լրջաբար, տեսնել,
գիտել իւր հարուածը՝ և այդ ի մնաս իւր ու-
սումնարանական կազմակերպութեան եղած մի
տեսակ մենավաճառութեան առաջն առնել,
նոր օջախը հին օջախին հետ տապալել:

Մենք այդ տեսակ դպրոցներն բարոյակա-
նի ուսման մասին ոչինչ չխօսեցինք: Այդ էլ
թող կրօնական ժողովը խորհի, եթէ իրօք կայ
մի այդ տեսակ ժողով:

սա է թէ՛ երբ մի կողմէն այդ պարոնները սեղակի
իրանց անձնական շահին համար ի վնաս հասարակու-
թեան կազմութեան դպրոցներ կ'բանան: Միւս կող-
մէն տեսակ մը անձինք նոյն իսկ երբեմն խմբադիր-
ները, չենք հասկնար ո՞ր հովերէն շարժեալ ատոնց
փառաւոր ածականներով կ'զարդարեն, ազգասէր եւ
այլ սրբազան տիտղոսները կ'տան եւ այլն:

Երանի թէ՛ ճշմարիտ ազգասէրների ոսկորները
լեզու ելնէին սւ բողոքէին այս անիրաւութեանց դէմ,
Իրաւն ասաց սա՛ մեղ համար մի բաւական խըր-
թին հանելուկ է, զորն որ լուծողը մրցանակի ար-
ժանի է:

Արդ՝ յօդուածնիս չլերջացրած, կարժէ որ
մի քանի խօսք էլ գելչերօթիկներու նկատմամբ
ասենք:

Այս տեսակ դպրոցների հաստատման օդ-
տակարութեանը՝ ամենէն մեծ ապացոյցները
այն էին թէ՛ աշակերտաց բարոյականը կը պահ-
պանուի և դատարկաչարժութենէ կարգիլուի:
Սակայն այսօր ո՞վ կը տարակուսի թէ՛ մարդ
բտուած էակի բաւականութիւնը, ուրեմն և
յառաջադիմութիւնը փոփոխութեան մէջ է:

Շա՞տ զբօսեցիք, պարո՞ններ, նստեցէ՛ք
կհանդատա՞ր. շա՞տ նստաք, պառկեցէ՛ք կը
խաղաղիք, շա՞տ պառկեցիք. ելէք կհանդար-
տիք ու կզուարթանաք. շա՞տ անգամ կերաք
մի և նոյն կերակուրը ու կզուէ՛ք, փոխեցէ՛ք
զայն, ուրիշը աւելի ակորժանօք կուտեք ևլն,
ևլն:

Ահա թէ՛ ի՞նչ տեղ են ուրեմն մարդուն
բաւականութիւնը:

Պանսիօնները, պարոններ, միակերպու-
թիւն են. նոքա կ'փոտեցնեն, կ'նեխեցնեն և
կ'փչացնեն ապագայ մարդերին: Իսկ ի՞նչ կը
վերաբերի բարոյականի պահպանուելուն. նո-
րէն պիտի ասենք, որ պանսիօնի միակերպա-
կան կենաց մէջ նա աւելի և աւելի կապականի
անշուշտ, ըստ որում դուրսը երբ մի քանի պա-
տանի կ'խորհին անբարոյականութեան վրայ,

յանկարծ մի նոր դէպք , մի նոր պատահմունք ,
 մի նոր երեւոյթ , մի նոր ձայն , մի նոր ձեւ ,
 մի նոր շարժմունք , մի նոր տեսարան կ'յեղա-
 շրջեն տղայոց երեւակայութիւնը : Իսկ պանսի-
 օններուն մէջ , երկար ու բարակ , միշտ միա-
 կերպութեամբ յաջող ժամանակներ կունենան
 պատանիները անբարոյականութեան վրայ խոր-
 հելու խօսելու և ի դէպ ժամանակին դորձելու :

Հասցա ո՞ւր դնենք դորձնական կենաց ա-
 հագին օգուտները :

Մենք այս մասին մանրամասնութեանց մէջ
 չենք փափագիր մտնել , վասն զի պետագոգիայի
 վրայ փոքր ի շատէ տեղեկութիւն ունեցող ա-
 մեն անձինք գիտեն անշուշտ , որ գիշերօթիկ-
 ները իրանց դատը վաղուց կորցրած են : Աւս-
 ան հիմակու հիմայ մեր խօսքին հետեւեալ
 դէպքը պատմելով վերջ կ'տանք :

Մի նշանաւոր անձի զաւակը քանի մը տա-
 րի պանսիօնի մը մէջը կապրէր : Այդ դպրոցի
 երթեւեթ աշակերտաց կարգին մէջ ստիւրիչ
 մը տղայ կար , զոր տնօրէնը շատ կը սիրէր ,
 սնպէս որ հարուստի զաւակին նախանձը շարժեց :

Նա՛ բողոքեց իւր հօր թէ ի՞նչ ասել է
 ստիւրիչի տղի մը չափ պատիւ չունենալ :

Մեր ճոխ պարոնը անմիջապէս տնօրէնին
 իմաց բացատրութիւն պահանջելու :

Տնօրէնը կանչեց նորա զաւակին և մի փոքր

ստակ տալով ինդրեց , որ երթայ մետաքս բե-
 րէ : Գնաց նա՛ և փոքր միջոցէն յետ դարձաւ
 հարցնելու թէ ի՞նչ տեսակ մետաքս առնէ :

Սեւ մետաքս զաւակս , ասեց տնօրէնը :

Տղան թռաւ , բայց մի փոքր յետ կրկին
 փերադարձաւ , պատուելի , հաստ թէ բարակը
 ստանեմ : Հարցրեց նա : Այսպէս տղան մինչ այս
 դորձքը վերջացնելը ստիպուեցաւ երեք չորս
 անգամ երթալ գալ :

Մի փոքր յետոյ Տնօրէնը սափրիչի տղին կան-
 չելով մի և նոյն առաջարկութիւնը արաւ : Իսկ
 տղան դեռ չ՛գնացած՝ պատուելի ի՞նչ տեսակ
 մետաքս կուղէք , ասացէ՛ք , հաստ թէ բարակ ,
 ոլորուած թէ չոլորուած , սև թէ ճերմակ ,
 կարմիր թէ դեղին հարցրեց , նա :

Գնա՛ տղաս էլ մետաքս պէտքը չէ , ասեց
 տնօրէնը : Իսկ յետոյ դառնալով դէպի իշխա-
 նին գոչեց , դուք այս երկու տղաներէն ո՞րը
 աստ սիրեցիք :

Եթէ երկուսն էլ իմս լինէին , ես վերջինը
 աւելի կը սիրէի , պատասխանեց հիւրը :

Սակայն մի մոռանաք , որ երկուսն ալ իմս
 են , վրայ բերեց տնօրէնը :

Բայց դուք էլ մի մոռանաք , որ երկրոր-
 զը՝ ամեն օր մի երկու ժամ դուրսները կ'զբա-
 տուէ , շուկան կերթայ և վերջապէս երեկոյ-
 տաները ևս այս տեղ չէ : Իսկ իմ զաւակը չորս

Տինդ տարի է, որ աստ փակուած է, ասաց
պարզութեամբ մը խշխանը :

Յարգելի տնօրէնը ձեռքը ճակտին տա-
րաւ և մի փոքր խորհելէն յետ : Ուրեմն յան-
ցանքը դպրոցինն է, գոչեց նա՛ մի պաղարու-
նութեամբ : Եւ միւս օրը արդէն դպրոցը գի-
շերօթիկ աշակերտներ չունէր :

Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ :

2013

« Ազգային գրադարան



NL0050650

72061

